ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 61-25
05.09.2025

Նատիվա ՍՊԸ-ի տնօրեն
պ-ն Պ. Արղուշյանին
Հասցե ՀՀ, ք. Գյումրի Վ. Սարգսյանի 44/1
Էլ փոստ՝ Hakob012015@yandex.ru

Ի պատասխան սույն թվականի սեպտեմբերի 2-ին էլեկտրոնային փոստով ստացված գրության հայտնում ենք, որ ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/37-1 պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 12-րդ չափաբաժնով, Ձեր ընկերությունը պետք է մատակարարեր 100 լիտր հեղուկ օճառ:

Ձեր գրությամբ հայտնում եք, որ Նատիվա ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել պայմանագրով նախատեսված 100 լիտր հեղուկ օճառը: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ին ընդունված որոշմամբ հաստատված Գնումների կազմակերպման կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ) պարբերությամբ՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով այն լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Տեղեկացնում ենք, որ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և և որակավորման ապահովումների գումարները, ապա հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը(լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն ՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների փերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախայտմամբ) կատարելը

Հիմք ընդունելով վերոգրյալը հայտնում ենք, որ ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/37-1 պայմանագրի 12-րդ չափաբաժնի մասով պայմանագրի կամ որակավորման ապահովումները վճարելուց հետո, այն այդ չափաբաժնի մասով պայմանգիրը կարելի է համարել է միակողմանի լուծված:

Այն ժամանակ երբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարում է պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցի վերաբերյալ չի դիմում լիազոր մարմնին Գնուների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունցող անձանց ցուցակում ներգրավելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալն, առաջարկում ենք հնարավորինս արագ ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ 25/37-1 ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման

ապահովումների՝ 12-րդ չափաբաժնի մասով, գումարները փոխանցել մեր ընկերության Արդշինբանկ ՓԲԸ-ի, Շենգավիթ մասնաճյուղի 2473600002170010 բանկային հաշվեհամարին:

Գումարների փոխանցումից հետո այդ մասին Ձեր կողմից ստորագրված և կնքված գրությամբ տեղեկացնել մեր ընկերությանը: Գրությանը պարտադիր պետք է կցել գումարների փոխանցման վերաբերյալ փաստաթղթերի սկանվորված տարբերակները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Ժ/Պ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող
Ա. Պետրոսյան
Հեռ 011 47-26-11